

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Tiflis. Redakcia «Melik».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր ըստին 2 կոպեկ:

„ՄԵԼԿ“ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

ՆԵՐԿԱՅ 1886 ԹԻՒՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, շաբաթը երեք անգամ, նոյն օրը և նոյն պարագրաֆով: Մենք
տառադրում ենք սեփական չէ՛նք ՆԵՐԿԱՅԻՆՆԵՐ:

«ՄԵԼԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, տասն և մէկ ամիսը 9 ռուբլ, վեց ամիսը 6 ռուբլ:
Գրվել «ՄԵԼԿ» կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ
ՏՈՒՆԸ գտնվում է Բարձրակի և Բարձրակի փողոցների անկիւնում, Թաւառակի տանը, № 12 բնա-
կարանում: Ուղղակի մուտքը Բարձրակի փողոցից է, Բէմէյէնայա Ուղղակի փողոցից դիմաց:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑ «ՄԵԼԿ» գրվելով կարելի է վճարել 25 ֆրանկանց թղթագրամով:
Թիֆլիսում «ՄԵԼԿ» համարները հատով ծախվում են 7 կոպեկով: Կ. ՇԱՎԵՐԴՈՎԻ պալի-
տիկոս, պ. ՏԵՐ-ՅՈՒՍԵՖՅԱՆԻ ծխախոտի մագաղանում (կողմից հիւրանոցի տան) և պ. ԱԼԻՍԻ-
ՆՕՎԻ ծխախոտի մագաղանում (վարձարարի արձանի դիմաց):

Յայտարարութիւնները, ամեն լեզուներով, ընդունվում են ԽՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ: ԽՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ

ԽՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ ԵՒ ՄԵԼԿԻՆՆԵՐ

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄԵԼԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հա-
ցեով: ТИФЛИСЪ, Редакция газеты «МЕЛИКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Հասցեն փոխելու ժամանակ պէտք է ուղարկել խմբագրութեանը 28 կոպեկ կամ 4 հատ 7 կո-
պեկանոց փոստային մարկա:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տեղական երաժշտութեան մշակութիւնը:—ՆԵՐ-
ԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ երեւանից: Ներքին
լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անգլիա: Միա-
ցեալ նահանգներ: Արտաքին լուրեր:—ԽԱՆԻ
ԼՈՒՐԵՐ:—ՀԵՐԱԳԻՐՆԵՐ:—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ:—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ՏԵՂԱԿԱՆՈՅՑ:—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ: Կ. Պոլսի հայ-տաճկական գրական
նութիւնը:

ՏԵՂԱԿԱՆ ԵՐԱՌԾՏՈՒԹԵԱՆ ՄԵԼԿՈՒԹԻՒՆԸ

Մարտի 8-ին Թիֆլիսի թատրոնում իր
առաջին կոնցերտում երևան եկաւ պիանիս-
տուհի տիկին Տիմանովա առաջին անգամ
առանց մեր հայ երաժիշտ-կոմպոզիտոր պ. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ-ՏԱՃԿԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ «ՃԵՐՏԵՄԱՆԵ-ՇԱՐԳԻԹԵՆ» ԼՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Տաճկաստանի հայը, ինչպէս յայտնի է, այնպէս
են վարվում տաճկերէն լեզուի հետ, ինչպէս ՎԵ-
րաստանի հայը վրացերէնի հետ: Նոյն թէ ըն-
տանեաց գրկում և թէ արտաքին շրջանում, ի
հարկէ ոչ առանց բացառութեան, խօսում են
թրքերէն: Դարձեալ հայ առաջնական պիտոյքը
լինելու կոչված մասունքն էլ հետեւելով այդ ըն-
թացքին հրատարակեց և հրատարակում է թրքե-
րէն լեզուով—բայց հայ տառերով, զանազան ըն-
թերցանութեան գրքեր, ինչպէս աղթագրքը, դա-
սագիրքը, վիպասանական գրութեանը և այլն: Բայց
թրքաբարբառ հայ ժողովրդեան առօրեայ հետա-
քրքրութիւնն յազդելու առիթ միշտ էլ հարկա-
ւոր էր և ահա Կ. Պոլսում հետազնտէ լոյս տեսան
հայկական տառերով գրված թրքաբարբառ հայ լրա-
գիրներ, ինչպէս «Մէմուհի Հալաթա» (Հաւա-
քածոյ լրեր), «Մէմուհի Հալաթա» (Չայի ճշմար-
տութեան), «Մանգուլէի Լեֆթար» (Շարք կար-
ծեաց), «Թէրեմանը Լեֆթար» (Թարգման կար-
ծեաց), «Մէմուհի Արաթ» (Հաւաքածոյ լրեր)
և «Ճէրեմանը-Շարքալէ» (Արեւելեան լրագիր) և այլն:

1877-ին լոյս տեսաւ «Թէրեմանը-Լեֆթար»
լրագիրը նախկին «Միմուհի» զանգուարթութի խմբ-
ագիրը պ. Սեփան Սարգսյանի հրատարակութեան
իրաւանց և պ. Տիգրան Ճիւլէկեանի անօրինու-
թեան ներքեւ: «Թէրեմանը-Լեֆթար» իւր հրատա-

կօրգանովի «Rapsodie Arménienne» պիե-
սան, որի մասին մենք խօսել ենք մի ան-
գամ մեր լրագրում:

Այդ պիեսան նշանաւոր պիանիստուհին
կատարեց շատ գեղեցիկ կերպով, գլխաւո-
րապէս և այն պատճառով, որ այդ երա-
ժշտական գրութեանը բնաւորութիւնը շատ
նման է այն երաժշտական ճիւղին, ունի-
դարձակա՛ն երաժշտութեանը, որ տաղան-
քաւոր պիանիստուհու մասնագիտութիւն է
համարվում: Արդէն մի քանի ժամանակ
առաջ, երբ տ. Տիմանովայի կոնցերտները
աշոգոթիւն ունեցան Վիեննայում, այդտե-
ղի լրագիրներից մինքն այն միտքն էր յայտ-
նել, որ Լիստից յետոյ ա. Տիմանովայ այժմ
առաջին տեղն է բռնում Եւրոպայում ունի-
դարձական երաժշտութեան պիանիստ վրա
կատարման կողմից:

Բնական հէնց սկզբից մեծ յաջողութիւն ու-
նեցաւ, վստահ չէ նրա խմբագրութեան մէջ վայ-
րում էին այնպիսի անձինք, որոնք մեծ հեղինա-
կութիւն ունէին հայ-տաճկական գրականութեան
մէջ, ինչպէս հանգուցեալ Յովսէփ Վարդանանց
և Արտիմ Էֆ. Ալիք. (հայ-կաթոլիկներ): Հայ տաճ-
կաբանների պատկի և աղգային նշանաւոր պոե-
տիկան Յովսէփ Վարդանանց, որ իբրեւ արեւելի
պայտոնեայ (նախկին թարգման Օսմ. ծովային
միջնադարութեան) ծանօթ է առհասարակ Վա-
րդան փաշա անուամբ, աշակերտ էր Վիեննայի
Միխիլարեան միաբանութեան և ամբողջ քաղաքը
դարձեալ առել վայրած է հայ-տաճկական գրակա-
նութեան առաջնորդ վրա ոչ թէ միայն իբրեւ
խմբագիր, այլ և իբրեւ հեղինակ: Նորա հեղինակու-
թիւններից յիշեց մի քանի մեծ ծանօթներն, ինչ-
պէս օրինակ «Թարիխի Նափ օլ Են Պօնա-
փարի» (Պատմութիւն Նափօլէօն Բոնափարի)
3 տուրա հատորից բաղկացած, որի մէջ հետեւած
է գլխաւորաբար թիւրք և Նորվէնս պատմագիրնե-
րին, «Շարք մուհարիպէսի» (Արեւելեան
պատմագիր) 1877—8, որ պատմագրի ընթաց-
քում հրատարակվում էր «Թէրեմանը-Լեֆթար»
լրագրի, ֆէլիէտների ձեւով և յետոյ առանձին տը-
ղած է և 2 հատորից է բաղկացած, «1856 Փա-
րիզ օսն կրէսի դապիւնի մէջ էր» (Ա-
տենագրութիւնը 1856-ի Փարիզի կոնգրէսի)
և թարգմանութիւն Քրանտիական հեղինակ ԼԵ-
սաժի «Կալ-Վատանայ» «Թօփալ Շէյխան» գը-
քին Վարդանանցի այս և սրա նման մի քանի
այլ գրութեան ընդուն էլ տաճկերէն և հրա-
տարակված են հայ տառերով: Այդ գրքերն իրենց
գեղեցիկ, տաճկ և կանտաւոր ոճով աչտաչ

Ունեւարացիք, ինչպէս յայտնի է, թուրք
ծաղումից են և նրանց երգեցողութիւնն
ու երաժշտութիւնը կրում է բնականաբար
արեւելեան, և այն էլ թուրքական բնաւո-
րութիւն: Անկարելի է հերքել որ և մեր,
հայերի ժողովրդական երգեցողութիւնն ու
երաժշտութիւնը ենթարկվել է դարերի ըն-
թացքում մահմեական աշխարհի ազդե-
ցութեանը, ինչպէս նոյն ազդեցութեանը
ենթարկվել են և մեր գրականութիւնը,
մեր ընտանեկան կեանքը, մեր հասարակաց
բարք ու վարքը:

Որքան դժուար է մի և նոյն ժամանակ դա-
վել աշխատանք է ժողովրդական գրակա-
նութիւնը, ժողովրդական առասպելներն ու
լեգենդները, ժողովրդական բանաստեղ-
ծութիւնը մշակել գրականական կոթ, գե-
ղարուեստական կերպարանք տալով ժողո-
վրդական մտաւոր կեանքի այդ հում, ան-
մշակ արտադրութիւններին—նոյնքան դը-
ժուար է և մի և նոյն ժամանակ ցանկալի է
որ և մեր երաժշտական հում, անմշակ նիւ-
թերը, մեր տեղական երաժշտութիւնն ու
երգեցողութիւնը եւրոպական նոտաների
փոխարկվէին և ունեւարական ազգային ե-
րաժշտութեան նման բանային ընդհանուր
եւրոպական երաժշտութեան սեփականու-
թիւն:

Փորձել եղած են մեր ազգային, կամ
ընդհանուր կովկասեան երաժշտութիւնը
փոխարկել եւրոպական նոտաների, բայց
նրանք մեծ մասամբ անփորձ, երաժշտու-
թիւնը հիմնաւորապէս չուսումնասիրած
մարդկանց ձեռքով կատարվելով, եւրոպացի
նշանաւոր երաժիշտներն կողմից ոչինչ ու-
նեւարութեան չարժանացան: Պ. Կօրգա-
նով առաջինն է, որին աշոգոթի է, օգուա-
քաւորով պարսիկ և հայ ժողովրդական եր-
գերից ստեղծել մի ինքնուրոյն հեղինակու-
թիւն, որ կարող է կատարելապէս գաղա-
փար տալ մեր ազգային երաժշտութեան
մասին և եւրոպացիներին:

Եթէ մենք մեծ նշանակութիւն ենք տա-
լիս մեր ժողովրդական գրականութեան ու
բանաստեղծութեան մշակութեան գործին,
սաստիկ ուրախանում, պարծենում ենք
երբ մի հայ բանաստեղծի կամ վիպագրո-

ւալին տեղն են բռնում հայ-տաճկական գրակա-
նութեան մէջ: Բայց Վարդան-փաշա ունի նաև
հայերէն գրութեան, ինչպէս օրինակ «Ելեկարական
հեռագիր», տպւած 1857-ին Կ. Պոլսում, որի մէջ
մի տեղ գտնուում է ցոյց տալիս, թէ ինչու հայ
գրագէտները աշխատում են հայերէնի թարգմա-
նել այնպիսի ուսումնական բառեր, որոնք ընդ-
հանուր քաղաքացիութեան իրաւունք են ստացել
առհասարակ եւրոպական լեզուաց մէջ: Վարդան
փաշա կարող է պարծել որ այդ բնական միտ-
քով նա է յայտնել առաջին անգամ, ինչպէս կար-
ծում ենք, Տաճկաստանի հայոց մէջ, բայց որ
դժբաղդաբար մինչև ցայժմ չատ քիչերից է դու-
րաւորվում: Այստեղ անցողակի յիշեց, որ ինչպէս
Վարդանեանի այս, նոյնպէս և մինչև ցայժմ վայր
Կ. Պոլսոյ բոլոր հեղինակների հայ շարագրու-
թիւնների ոճը յայտնի կերպով ինքն է տաճկե-
րէնի խորին ազդեցութեան ներքեւ: Այժմ միայն,
այն էլ եւրոպական լեզուաց ուսումնասիրութեան
չնորհին է, որ Տաճկաստանի հայը (գրողներն),
այն ևս դեռ փոքր մեծամասնութեամբ, սխալ են
հայերէնը ազատել տաճկական ոճի հզօր և դարե-
րով իշխող ճիւղաներից: Այս վերջին հարցի մա-
սին մենք կը խօսենք մի այլ մասնաւոր յօդու-
ածու:

Բայց պարզեմք աստ, թէ մենք ինչ ենք իմանում
հայ-տաճկական գրականութեան մասին:
Չէ կարելի ասել, որ Կ. Պոլսոյ տաճկագէտ
հայերը արդէ թիւրք լեզուին այնքան ծանօթ չը
լինին, որքան նոյն ինքն թիւրք գրագէտները:
Սակայն հմուտ տաճկագէտը իսկոյն կարող է նը-
կատել այն տարբերութիւնը, որ գտնվում է բուն
թիւրք գրագէտի և հայ տաճկագէտի գրածի մէջ:

Դի հեղինակութեան մի կտոր թարգման-
վում է եւրոպական լեզուով և տպագրվում
եւրոպական մի որ և է հրատարակութեան
մէջ—ինչ ինքն արհամարհանքով վերա-
բերվում դէպի այն երեւոյթը, որ մի հայի
ստեղծագործած երաժշտական հեղինակու-
թիւնը, որ կրում է ազգային, ինքնուրոյն
երաժշտութեան գրօշմը, հաւանութիւն է
գտնում և անվում է մի եւրոպացի նշա-
նաւոր պիանիստի ձեռքով:

Երբ որ Չուսանեանի երաժշտական գը-
ւածներն են անվում մի կոնցերտում—մենք
պարծենում ենք, որովհետեւ իրան Չուսա-
նեանին մեր աչքերով երբեք չենք տեսել,
երբ Պատկանեանի բանաստեղծութիւնների
թարգմանութիւնները տպագրվում են գը-
մանական մի ամսագրում, մենք պարծե-
նում ենք, որովհետեւ Պատկանեանը հեռու
է մեզանից և ամեն օր մեր աչքերով նրան
չենք տեսնում:

Բայց երբ որ հոգաւոր տիկին Տիմա-
նովա Թիֆլիսի թատրոնում է ածում Կօր-
գանովի պիեսան, որտեղ լոճաներից մի-
նում ներկայ է և ինքն հեղինակը,
որին մենք ամեն օր մեր աչքերով ենք
տեսնում—մենք զայրանում ենք, մեր ե-
րեսի վրա երևում է արհամարհանքի
ժպիտ, որի աղբիւրը (խոստովանելիք)
ուրիշ բան չէ, եթէ ոչ նախանձ:

Բայց երբ կը լսենք որ նոյն Տիմանովա
մի քանի ամիսից յետոյ, ունեւարական պիե-
սաների հետ միասին կաճի Վիեննայի կամ
Լէյպցիգի մի կոնցերտում և Կօրգանովի
„Հայկական խաղերգանք“ պիեսան,—այն
ժամանակ մենք կը խնայրհայեմք իրողու-
թեան առջև և կը սկսենք փոքիկ այդ ե-
րեւոյթով:

Կա է հայի զգուշիկ բնաւորութիւնը.
ամեն բան ինչ որ մերն է հարածել, աշ-
խատել ոչնչացնել, ջնջել, ոտնակոխ ա-
նել:

Եւ չը մոռանանք որ Կօրգանով միակ է
մեր բոլոր երաժշտական մասնագէտների
աղքատիկ շրջանի մէջ, որ ընդունակու-
թիւն է ցոյց տուել ուսումնասիրել, մշակել
տեղական երաժշտութիւնն ու երգեցողու-
թիւնը և նրանցից արդիւնաբերել ինքնու-

Չարգացած հայ տաճկաբան իր թիւրքերէն գը-
րութեան մէջ հետեւելով թիւրք լեզուի ընդհա-
նուր գրական ընթացքին և պահելով հանդերձ
նրա արմատական ոճերն ու առանձնութիւնները,
նա՛ այսու ամենայնիւ բացատրութեան ձեւ, նախա-
դասութիւնների կապի և մասնաւոր պատմական
ոճի մէջ մոռանում է միանգամայն օտար, եւ-
րոպական լեզուի յատկութիւններ, որոնք թէ հա-
նում, վաճառում են թիւրք լեզուից ասիական մի
շարք մանուածապատ ոճերն և անգործածելի կամ
առհասարակ դժուար հասկանալի արաբական ու
թէ պահում են նրա մէջ արդէ թիւրք լեզուի կա-
նոնաւոր գրական վայելչութիւնը: Ահա այդ է, որ
մենք կոչում ենք հայ-տաճկական գրակա-
նութիւնը: Տաճկաստանում հայերից զատ շատ
թիւրք լեզուի գրականութեամբ, ինչպէս յայտնի,
հրէաներն և եւրօպացիք, սակայն շատ հազիւ կա-
րելի է պատահել, որ յոյն, հրէան կամ եւրօպա-
ցին, այնպէս խրախնայ և կարողանար նրան յա-
ռաջացնել ու զարկ տալ, ինչպէս այդ մեծ յաջո-
ղութեամբ անում է հայը: Հայ հատարակութեան
հիմնաւորապէս ընտելացնելու համար թիւրք գը-
րական լեզուին, որ իբրեւ պետական լեզու առան-
ձին նշանակութիւն ունի Տաճկաստանի հայոց հա-
մար, հրատարակվում են զանազան ձեւերով, որոնցից
մենք մասնաւորապէս ենք կոչել նորերում,
Վիեննայի Միխիլարեանների հրատարակած տաճկ.
հայ. գաղղ. բառարանի վրա (տես «Արձագանք»
1885 զեկտեմբերի 1. № 22. մեր յօդուածը՝
«Տաճկերէն լեզուն և Միխիլարեան հայը տաճկ.
հայ. գաղղ. բառարանը»): Հայ ժողովրդեան մէջ

ընդ, ամփոփ, մշակված երաժշտական ստեղծագործությունները:

Մեր պարտաւորութիւնն է նպաստել նրան, քաջալերել նրան այդ ասպարիզի վրա:

Մշակել մի ազգի գրականութիւնը կամ մի ազգի երաժշտութիւնը նշանակում է ոչ թէ միայն քաջալերել այն ազգի յարգը կուտուրական մարդկութեան աչքում, բայց որ գլխաւորն է հարստացնել ամբողջ մարդկութեան գրականութիւնն ու երաժշտութիւնը նոր, ինքնուրոյն նիւթերով, նշանակում է համամարդկային քաղաքակրթութեան լայն գետը հարստացնել, ծննդանիւնը նոր և թարմ ինքնուրոյն, ազգային գետակներով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մարտի 13-ին

«Մշակի» № 20-ի մէջ կարդացի պ. Բ. Ղորղանեանի պատասխանը իմ նամակին «Մշակի» 6-րդ համարում տպւած: Լռել այդ նամակի առիթով, անկարելի է. գուցէ ընկերացող հասարակութիւնը պ. նամակագրի թղթաշաններով գրած մի քանի հաշիւներին հաւատալ որպէս անհերքելի ճշմարտութեանց: Պարոնի առիթով, երբ նա իր քաղաքակրթական պաշտօնը յանձնելու է եղել իր յաջորդին, քաղաքը ունեցել է 32,900 ըստ պարտքի և ոչ 75 հազար, ինչպէս ես էի գրել: Որքան ես կարողացալ ստուգել ուսարկայի գործերից, իմ մի քանի օրվայ աշխատութիւնից յետոյ երևաց որ պ. Ղորղանեանը քաղաքագլխութեան պաշտօնը թողնելիս քաղաքը ունեցել է ոչ թէ 32,900, այլ աւելի քան 51 հ. պարտք, որին ապացոյց ես մատնացող կանխ պաշտօնական թղթերի և տեղեկութեանց վրա էլ եմ հարկ լինի: Արդարեւ այս հաշիւից չէ երևում, որ քաղաքը չէ ունեցել 75 հազար ըստ պարտքի և ոչ էլ 32,900 ըստ տուութեան պ. Ղորղանեանի, ես խոստովանում եմ իմ սխալը, խոստովանում եմ նոյնպէս նրա ամբողջ նամակի մէջ միակ և այն էլ՝ կիսով չափ ուղիղ կէտը: Արհայայթի ջրանցքի վրա ոչ թէ 10,400 ըստ գործ դրած, այլ 8,600 ըստ, որից միայն 7,000 ըստ գործից դրացած փողից վճարված: Այդ ջրանցքի բացվելուց առաջ (ուղում է ասել իր քաղաքագլխութեան ժամանակ) նա ասում է թէ քաղաքի վարչապետը երբեք տալիս էին 5,000—7,000 ըստ արդիւնքի, իսկ այժմ ջրանցքի բացվելուց յետոյ պէտք է հինգապատիկ աւելի տալին: Թուականական ու օրէնքի վրա, չը դիտեմ, սլարոնի քաղաքագլխութեան ժամանակ ցորենի խալվարը միջին թիւով ծախվում էր 45—

թէ թիւերն են գրաւոր լեզուի տարածութեանն օգնելու և թէ թիւերն են հայերէնից լա. հասկացողների հետաքրքրութիւնն գոհացնելու համար, Կ. Պօլսում, ինչպէս ասեցինք, հրատարակում են թիւքարաբառ հայտառու լրագրիներ, որոնց մէջ առաջին տեղին է գրաւած նախկին «Թերթեմանը»-ի ֆիլիսոփայ յաջորդ «Հերթալէ-Շարդիլէ» (Արեւելեան լրագիր) օրաթերթը: Որպէս վերև յայտնել ենք «Թերթեմանը»-ի ֆիլիսոփայ յաջորդ «Հերթալէ-Շարդիլէ»-ի Տիգրան Եֆէնդի ձիվէլէկեանի տնօրէնութեան ներքեւ, Վարդան փաշայի մահաւանդից յետոյ լրագրի խմբագրութիւնը բոլորովին մնաց պ. ձիվէլէկեանի վրա: Այս վերջինն իսկզբան մի նշանաւոր փայլ չէր տալիս իր խմբագրած լրագրին, բայց հետո՞հետէ այնքան յաջողութիւն և յաւաքագրութեան ունեցաւ, որ Կ. Պօլսոյ հայ խմբագիրներից ոչ միին տեղի չի տալ և այժմ նոյն շարքից էլ բարձր է: ձիվէլէկեան մի առանձին դիրք ունի, կարող եմ ասել, մեր բոլոր խմբագիրների մէջ, իր զարմանալի սահուն գրչով: Խմբագրատի քնն, նա իր գրեթէ ամէն նիւթի վերաբերեալ յօդուածները մէջ իր խօսքերն համեմատում է իր անսպասելի կատակաբանութեան հիւթով: Բայց զլխաւորն նրանումն է, որ նա վերին աստիճանի գրչով և նախանձադող է իր ծաղրաբանութեանց ըստ տեղեկաց և հանգամանաւոր գործածութեան մէջ, որով նրա նոյն իսկ լուրջ յօդուածներն, ինչպէս օրինակ քաղաքական խնդրոց նուիրեալներն, մեծ ուշադրութեամբ և հրճւածութեամբ են կարդացվում: Պ. ձիվէլէկեան անգուցող պաշտպանող է ճշմարտութեան: «Արեւելի» մրտացածին Հաճնոյ բուն ամուսնութեան ստուծեան զէմ նա այնքան մաքուրեցաւ, որ վերջա-

50 ը. հետեւադէպ այդ հոդերը պէտք է բերելն ոչ թէ 7 հազար ըստ, այլ 27 հազար: Այժմ նոյն հոդերը բերում են մօտաւորապէս հինգ հազար ը. արդիւնք և որքան ես տեղեկացալ կոտորակով, այժմեան կապալաւուն պարտաւոր է մի անգին լին չինել այդ հոդերի գլխին և բացի այդ ջրանցքը ենթարկել վերամորոգութեան: Այժմ հարցնում եմ պ. Ղորղանեանին. այդ հոդերը նրա ժամանակը աւելի օգուտ էին տալիս քաղաքին, թէ այժմ, երբ ցորենի խալվարը 10—12 ըստ թիւով է ծախվում: Նա ասում է, որ համատարած թանգրութիւնն էր պատճառը որ իր ժամանակ մի ֆ. 12 Կ. էր ծախվում, բայց յիշում է արդեօք որ այդ թանգրութեան ժամանակ մանաւանդ 1880 թ-ին, ոչխարը նոյն գնով էր ծախվում, ինչ գնով ներկայումս, գուցէ և աւելի է ծան, վասն զի խոտ չը լինելու պատճառով գիւղացիք, իրանց անասունները սովամահ լինելու վտանգից ազատելու համար, ստիպված բերում էին քաղաք և վաճառարած թանգրութիւնն էր պատճառը մի թանգրութեան, միւս տեղը մոտենում է, որ այդ թանգրութեան ժամանակ քաղաքի աճողին լայնատարած հոդերը ամենաշինքն գնով կապալում էին տրվում: Եթէ չիմ սխալվում, կարծեմ վերջ յիշած մի քանի կետերում պ. Ղորղանեան որոնում էր իր պաշտպանութիւնը իմ զէմ ուղղած նամակի մէջ, այժմ դառնալով և մի հայացք գցելով պարոնի անցեալ գործունէութեան վրա, որպէս քաղաքագլխի: Հոկտեմբերի մէկից 1879 թ-ի մինչև մէկին սեպտեմբերի 1884 թ-ի, բայց վարչութեան սկզբնական կազմակերպութեան համար վերցրած պարտքից, դանձարանից ստացած փոխարկաբար գումարից, քաղաքային արկղը մտել է կալուածական և այլ մուտքեր մօտաւորապէս 238 հազար. այս աճողին դուռը մինչև վերջին կապելը սպառնուլուց յետոյ նոր վարչութեանը յանձնելից մի դատարկ արկղ, վերջինս պարտքերը և դատատանական անվերջանալի զէմը: Մի այսպէս նշանաւոր դուռը ոչնչանալուց յետոյ պ. Ղորղանեանի ժամանակ մեր քաղաքի բարեկարգութիւնը աճում արտից էր հասել: Ինչպէս իր ժամանակին կարողում էինք լրագրիներում, փողոցներում ցեխի լճակների վրա պէտք էր նաւակներով շրջել, քաղաքային պարտիզի մէջ գտնվող պառլիմենտի վրա բաւականաչափ դուռը միտնուլուց յետոյ, այսօր նրա մօտից անցնելը վտանգաւոր է. պոլիցիայի և այլ պաշտօնատարների հասանելի ուժիկները ամբողջով էին քաշ առալի և մինչև անգամ բանը այն տեղը հասաւ, որ իշխանութիւնը ստիպված քաղաքի կշիռը հաստատելի եկամուտի վրա արգելք դրեց: Իսկ մեր քաղաքի վրա միաբերան պահանջում էին անպապող քննել քաղաքային դրամարկղը, պ. քաղաքագլխը միշտ զգուշարանում էր հաշիւ տալ քանի որ, ինչպէս երևում է հաշուապահութիւնը շատ անխնայ ու

պէս յաղթութիւնն ու ճշմարտութիւնը իր կողմը պահեց:

Ինչպէս ասեցինք պ. ձիվէլէկեան իր լրագրին խմբագրում էր Պ. Անտոն Սաքայեանի հրատարակութեան իրաւանց ներքեւ: Սակայն անցեալ 1885-ին նա Օսմանեան կառավարութիւնից սեպտեմբեր լրագրի հրատարակելու արգելութիւնն էլ յաջողեցաւ ստանալ, ինչպէս մինչև նոյն տառն սեպտեմբեր տպարան ունենալու իրաւունքն էլ ձեռք էր բերել) և յունիսի 1-ին լոյս տեսաւ «Թերթեմանի» ֆիլիսոփայ տեղ նրա «Հերթալէ-Շարդիլէ»-ի առաջին համարը, և դրանից յետոյ հրատարակվում է շարունակ ամենայն օր բացի կիրակի և տոն օրերից: Թերթի դիրքը «Մշակից» մեծ «Արեւելից» քիչ փոքր է. տարեկան բաժանորդագրել է Կ. Պօլսում 200 զրուս (17 լուրը), Կ. Պօլսոյ դուրս 240 զրուս (20 լուր): Հասցէն է «Redaction du journal armenien» «Djeridei-Chariké, 20, Grand rue de la S. Porte Constantinople»: «Հերթալէ-Շարդիլէ» բազմաթիւ թղթակիցներ ունի Հայաստանում, Տաճկաստանում, և թէ այլ երկրներում. նա ստանում է սեպտեմբեր հեռագրիներ: Այս լրագրի բովանդակութեան մեծագոյն մասը նուիրված է քաղաքական լրոց և քաղաքական խնդիրներին: Նա ջրում պաշտպան է առհասարակ Անգլիային և անգլիական քաղաքականութեան: Թերթի առաջին երեսի վրա գրվում են նախ «Ալիւլիկ հավատի» վերնագրի ներքեւ քաղաքական աշխարհի ամենանոր լրերը: Առաջին երեսի վրա են նամակապէս հեռագրիներն և աղբյուրի բաժինը, ուր տպվում են զանազան ազգային կենսից նորութիւններ, ազգ. պարտիզաբանաց, այլ և այլ եկեղեցիների, թաղական խոր-

խաւն էր: Կառնալով այն խօսքերին, իր թէ ես ամբողջ ստիպված թաղելու եմ Ա. Ն. տառերի դիմակի տակ, շատ սխալվում է պարոն նամակագիրը: «Մշակին» 13 տարի թղթակցելով, ամբողջ նրանք, բայց ամենից լաւ պ. Ղորղանեանց գրեթէ Ա. Ն. ու լինելը: Այն, ես իսկապէս այդ տառերի համետ քողի տակ ծածկում էի անունս և անցնում էի գրի այն ամենը, ինչ որ տեսնում, լսում և զգում էի: Եթէ նամակի տակ հեղինակի իսկական անունը գրելով թղթակցութեան մէջ պարունակող իրադրութիւնները պ. Ղորղանեանի կարծիքով արդար և իրաւացի են դառնում, ես չեմ զրանալ կատարելու նրա ցանկութիւնը: Բայց մի երեւոյթ ինձ զարմանք պատճառեց. այդ նա է, որ իմ նամակիս պատասխանողը այն անձնաւորութիւնն է, որի դատը պաշտպանելու դերը պէտք է պատկանէր մի որ և է ուրիշ անձնաւորութեան: Ուրեմն այն անձինք՝ որ մի ժամանակ Ղորղանեանի գործունէութիւնը երկրորդ փայլուն աստղերի հետ էին համեմատում, նրանք այլ ևս չը կան... աւաղ փառացի անցաւ: Այս էր ահա մօտաւորապէս անցեալը նրան քաղաքի պ. Ղորղանեանի քաղաքագլխութեան ժամանակ, երբ քաղաքը ստացաւ արքունական դանձարանից և 18 հազար և օժանդակութիւն (субсидия): Ներկայումս երբ այդ նպատակը այլ ևս չէ տրվում, ինչ դրութեան մէջ է քաղաքը, որքան պարտք է վճարված, ինչ համեմատութիւն ներկայի և անցեալի մէջ, — այդ մասին մի ուրիշ անգամ:

Դոմայի ձայնաւոր Ա. Տէր-Վարդանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 8-ին տիկին Տիմանովա տուեց իր վերջին կոնցերտը թիֆլիսի թատրոնում: Տիկինը իր խաղով հիացրեց հասարակութիւնը, անասելի ոգևորութեանը հասցրեց ամբողջ թատրոնը, որ գրեթէ կատարելապէս լի էր: Իսկական տաղանդը արդում է նոյն իսկ անդադրացած հասարակութեան վրա: Տիկինը մանաւանդ աշուղութեամբ ածում է ունգարական երաժշտութիւնը: Եւ առհասարակ Լիտի հեղինակութիւնները կատարման մէջ նա աննման է: Լիտի «Hochzeits-March» և մանաւանդ «Ունգարական ֆանտազիա» օրկեստրով մի այնպիսի տպաւորութիւն գործեցին հասարակութեան վրա, որ օգևորութիւնը տիրեց նրանց, որոնք պրօֆաններ են երաժշտութեան մէջ: Հասարակութիւնը չէր ուղում հեռանալ թատրոնից. ծափահարութիւնների, «բիսերի» և ընծաների վրջ չը կար: Տիկինը իր մէջ ամեն լայն և միայնակ, որ հարկաւոր է մի պրոֆանտուհու համար. ձեռքերի մեծ ոյծ, ածելու մէջ խոր զգացմունք, մատների աննման մեխանիզմ

հուրդներ և ընկերութիւնների ծանուցումները (ծրի), հայերէն լեզուով:

Չը մտանալ յիշել այստեղ և մի կարևոր հանգամանք, որ առանձին փայլ է տալիս «Հերթալէ-Շարդիլէին» և իրաւունք մեղ առանձնապէս յարգելու այդ լրագրին: «Հերթալէ-Շարդիլէ»-ի խմբագիր-հրատարակողն Տիգրան Եֆէնդի ձիվէլէկեան և նրա զլխաւոր աշխատակիցը Անտոն Եֆէնդի Ալիք հայ-կաթօլիկ են: Սակայն ընթերցողը ոչնչով չէ կարող որոշել «Հերթալէ» մէջ նրա խմբագրի կաթօլիկ լինելը, ինչպէս չէ կարելի նշմարել «Մշակի» մէջ սրա խմբագրի լուսաւորչական լինելը: Բոլորովին անկողմնապահ՝ պ. ձիվէլէկեան իր լրագրը նուիրած է հայ հասարակութեան օգտին — անխաբար: «Հերթալէի» Շարդիլէ գուցէ նրանով է զանազանվում միւս հայ լրագրիներից, որ նրա մէջ ազատ, համարձակ ընդունված են բոլոր այլադաւան հայ հասարակութեանց կարեացի և ներքին գործերի մասին հայերէն և թիւրքերէն յօդուածներ, հայ-կաթօլիկ պատրիարքարանի և ընկերութեանց ծանուցումներ և նրա մէջ երբեք մոտ չեն գտնում կրօնական խնդրոց ծանձրացողիչ դատողութիւններ և վիճաբանութիւններ, որոնք փոխադարձաբար հասարակութեան մտքերն պղծողաւոր զատ ոչինչ բանի չեն ծառայում: Սակայն այս էլ պէտք է խոստովանել, որ պ. ձիվէլէկեան հաստատ իր համոզմունքներն — ծառայեցնել իր լրագրը անխաբար և անկողմնապաշար հայ հասարակութեան օգտին — նա, ինչպէս նկատեցինք, առանձին նախադասում է տալիս լուսաւորչական հայոց վերաբերեալ իրօքութեանց. օր. Ազգային բաժնում նա միշտ նախ հրատարակում է հայ-լուսաւորչական պատրիար-

(արագութիւն), կատարման ինքնուրոյն արտայայտութիւն և խաղի անասելի մաքրութիւն: Բայց այնու ամենայնիւ երևում է, որ Շարդիլէի գրուածները նրա մասնագիտութիւնը չեն, ուրեմն և Շումանի գրուածներն էլ նա երկի այդքան աշուղութեամբ չէր անի, ինչպէս օրինակ տիկին Մեյնե (և դրա մայի մէջ Շումանի ոչ մի պիեսս չը կար): Բայց Տիմանովա աննման է Լիտի գրուածներին և ունի զարական երաժշտութեան կատարման մէջ, և աղբէն այդ մասնագիտութեան մէջ Եւրօպայումս էլ համարվում է եթէ ոչ առաջին կատարող, զոնք առաջին կատարողներից մին:

Ստացանք Կ. Պօլսում տպվող «Հաշակ ոսկեղէն» զարկութեան ամսօրեայ, պատմական, գիտական և բանասիրական հոդուածի յունվարի և փետրվարի տետրակները: Հրատարակվում է Ա. Մատթիսի Գարապաշեանի և Բ. Գուրգէնի խնամքով: Մի ուրիշ անգամ կը խօսենք այդ հրատարակութեան մասին:

Թիֆլիսի ընկերութիւնը հայերէն գրքերի հրատարակութեան լոյս է ընծայել Գեորգ Տէր-Ալեքսանդրեանի «Թիֆլիսից մտաւոր կեանքը» վերնագրով հատ հատորը: Ստացանք՝ այդ գիրքը: Նա այնքան ուշադրութեան արժանի է, որ ուրիշ անգամ պէտք է, որքան հարկ է մեզ, մանրամասնաբար խօսենք նրա մասին:

Ամիս 9-ին, Թիֆլիսի ժողովարանում կայացաւ կոնցերտ յօդուած Թիֆլիսի ընկերական զարդի աղբատ աշակերտների, նախաձեռնութեամբ տիկին Լ. Պ. Թամաշեանի, տիկին Լ. Ա. Լինկոյօսօյայի, և պ. Ա. Ի. Մանթաշեանի: Կոնցերտը շատ յաջող անցաւ: Դահլիճը կատարեալապէս լիցն էր: Մուտքը եղաւ մինչև 1100 ըստ: Իսկ ծախքը ոչ աւելի քան 100 ըստ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԻՒՍ

Գլխաւորն ընծաւ վճարական դիրքը դէպի իրանդական հարցը, մեծ յաղթունք է պատճառել պահպանողականների շրջանում: Սակայն վերջ կարողանալով իրան զսպել, մինչև անգամ մի ձառի մէջ առեց, որ Գլխաւորն ոչինչ հետեւանք չի համար, որովհետեւ ձեռնոցների նման փոխում է իր քաղաքականութիւնը: Սակայն պահպանողականները պետք զգալով, որ իր խօսքերը դառն զգացմունքների արտայայտութիւն են, քանզի է գործ դնում տարրացնելու այն կարծիքը, որ իր կարծիքն էլ պատրաստվում էր իրանդական

քարանի, թաղական խորհրդոց և ժողովրդեան վերաբերեալ լրերն և յետոյ հայ-կաթօլիկացին: Եւ այդ ոչ առանց բանաւոր պատճառի, ի հարկէ: Ըստ որում մեր հասարակութիւնն, որ դեռ կրօնական սփէրից բարձրանալու բաղձն չէ ունեցած, հակառակ դէպքում, կարող էր կողմնապահութեան ամբաստանութիւն բարգել պ. ձիվէլէկեանի վրա, ի նկատի ունենալով նրա կաթօլիկ լինելը և լուսաւորչականաց համեմատելով այլադաւան հայերին՝ ստուգա մեծամասնութիւն կազմելը: «Հերթալէի» Շարդիլէ շատ ուշաւոր չեալ է ազգային խնդրոց: Չիմ յիշում անցեալ «Մշակներ»-ի որ համարումն էր, պ. Հայկակ գրում էր թէ Կ. Պօլսում ազգային թարմ լրերին տեղեկանում են պ. ձիվէլէկեանի լրագրից: «Հերթալէի» Շարդիլէ՝ այդ իսկ պատճառներով Կ. Պօլսոյ լրագրիները առաջիններից մինն է և ոչ մի հայ լրագրից նուազ տարածված չէ: Նրա գրեթէ ամեն համարի մէջ կարելի է պատահալ հայերէն յօդուածներ: Ներկայ 1886-ի նոր տարվայ առթիւ նա հրատարակած էր հայերէն լեզուով ընդարձակ յօդուած «Ազգային տետրութիւն» վերնագրով, որ առողջ կերտով նկատողութեան էին առնվում 1885 թ-ի ընթացքում պատահած ազգային անցքերը:

Ի վերջ մեր յօդուածին, մենք յայտնում ենք մեր համակրութիւնը Կ. Պօլսում զարգացող հայտաճիւղի և զրա կաւն ու թիւն և «Հերթալէի» Շարդիլէ լրագրին, յաջողութիւն ցանկալով այս վերջինին և անյողողող շարունակութիւն և յարատեւութիւն նրա խմբագրի մեծ պ. Տիգր. ձիվէլէկեանին իր առողջամիտ և յաւաքացեալ համազգային ընթացքին և լուրջ ուղղութեան մէջ:

Առաքել Սարգսյանեանց

խնդիրը լուծելու, բայց, ի հարկէ, ոչ ի վնաս Մեծ Բրիտանիայի շահերին: Լորդ Չլորսթրիլը շարունակում է բռնա կերպով իր խռովարար սյուզետային-դան: Պատանդականները ամենայն միջոց դործ են դնում զբաղեցնել իրանդիայի կաթոլիկ հողեր-ւորականութեանը: Պատանդական մամուլը ամենայն օր խօսելով Գաղութների իրանդիայի հա-մար կազմած նախագծի մասին, ուղղում է յուզել հատարակաց կարծիքը: Հօլմսի առաջարկութեամբ Սալիսբուրիի կուսակցութիւնը կամեցաւ Գաղութո-նին ստիպել պարզելու կազմած նախագծի մաս-րամամուլութիւնները, բայց առաջին միջոցառումը իր արտաքին պատասխաններով հասկացրեց նրանց, որ ինքը լաւ է հասկանում այդ բոլորի ներքին նպատակը: Ծառանդական հողային հարցի մէջ, միանշանակաբար անդոր լինելով արտաքայանը իր տհաճութիւնը, պատանդական կուսակցու-թիւնը ուղղում է փոս փորել Գաղութների ա-ռաջ իրանդական հարցում: Պատանդականները ուղղում են օգուտ քաղել այն դէպքից, որ չափա-ւոր-աղաքատալ կուսակցութեան մի քանի անդամ-ները արդէն յայտնեցին, որ իրանք համաձայն չեն Գաղութների նախագծի հետ, որով նա ուղղում է տալ իրանդիային ինքնավարութիւն: Չամբելէն և Տրէվըրիան մինչև անգամ հրաժարական տուեցին: Հարախնդրեց համաձայն լինելով այն բանին, որ պէտք է մտցնել իրանդիայում բարենորոգումներ, դժուարանում է համաձայնել Գաղութների հետ նը-րա կազմած նախագծի վերաբերմամբ: Այդ նա-խագիծով իրանդիան պիտի ունենայ առանձին պարլամենտ և առանձին կաբինէտ: Տեղական գոր-ծերում պարլամենտը միանգամայն ազատ և ան-կախ կը լինի: Իրանդիան կունենայ տեղական ոստիկանութիւն: Անգլիական պարլամենտում իր-անդիան կունենայ իր ներկայացուցիչները, որոնք ազատ ձայներ կարող են տալ ընդհանուր տեղա-կան հարցերի համար: Գեռ չառ չէ անցել այն ժամանակից, որ Գաղութները հրաւիրում էր ամեն-քին օգնել իրան իրանդական խնդիրը լուծելու դրոժի մէջ: Բայց դատարարների մէջ իրանց կար-ծիքները յայտնուրեւ եղան, և ազատամիտ կու-սակցութեան արժանաւոր դեկլարացիոն ամենայն քայլափոխում ուղղում է ապացուցանել, որ ինքը և իր կուսակցութիւնը լաւ ճանաչեցին իրանդիա-յի ցուրերը, և այդ ցուրերի առաջին առնելու միակ միջոցը իրանդական ինքնավարութիւնն է: Պար-նէլը և կուսակցութիւնը որչի կերպ չեն ուղղում հասկանալ իրանդական բարենորոգումների միա-քը և միշտ յիշեցնում են, որ իրանք բարոյական մեծ ոյժ ունեն ազգաբնակչութեան մէջ: Իսկ իր-անդիան իր բռնած դիմումը ցոյց է տալիս, որ լիքի բարենորոգումներով ինքը երբեք բաւակա-նանալու միտք չունի: Ժողովրդեան մէջ օրէջցոր դարգանում է ատելութիւն դէպի անգլիական իշ-խանութիւնը: Նորերումս փոխ-արքային ցոյց տուած ընդունելութեամբ իրանդիան նոյնը նորից հատատեց: Հեռագիրը լուրեր է բերում այնտե-ղից զանազան հողային կռիւների և սպանութիւն-ների մասին: Լոնդոնից տեղեկութիւններ են դա-լիս, որ արևմտեան իրանդիայում սովը սաստկա-նում է և շատերը սովամահ են եղել: Եւ այդ պիտի դրոժի կուսակցութեան մէջ, այդպիսի իրականութեան առաջ պատանդական կառավարութիւնը թոյլ է տալիս իրան ասելու. «Իրանդական բարենորո-գումները կը ջլատեն Անգլիայի միտքները»: Գը-ժուար թէ այդպիսի խօսքերից խաբելն Անգլիա-յի իսկական հայրենասէրները: Գաղութները մի ժամանակ ևս կը սպասի, և պարզելով ազատա-միտ կուսակցութեան բոլոր ներկայացուցիչներին պարենխտների բռնելը դիմքը, համոզւում չը-րանց, որ Պարնէլի կուսակցութիւնը ցանկութիւն չունի իրանդական ինքնավարութեան ժամանակ օգուտ քաղել իրանդիայում իր ունեցած բարոյա-կան ոյժից: միանգամայն բաժանելու իրանդիան Անգլիայից, և ապա կազմելով հաստատ ոյժ և մեծամասնութիւն պարլամենտի մէջ, կը ներ-կայացնէ անգլիական ազգին և կառավարու-թեանը իր կարինետի կազմած նախագիծը իր-անդիայի մասին: Այն ժամանակ ազատամիտ կուսակցութիւնը միայն իրանդական ազգա-յին կուսակցութեան հետ, ամենայն յաջողու-թեամբ կը մծու իրանդիայի երկարամիտ պա-սեկներին խնդիրը:

ՄԻԱՅՈՒՆ ԵՄԱՆՈՒՆՆԵՐ

Բանտարներ խնդիրը յուզում է այժմ և Միա-ցեալ-Նահանգների հասարակաց կարծիքը և կա-ռավարութիւնը: Սակայն Նոր-հրկրի բանտարների

խնդիրը իր հիմունքներով և պատճառներով նման չէ ոչ Անգլիայի բանտարների խառնակութիւնների պատճառներին, և ոչ էլ Գեղարկուի դործա-դուլի շարժաւթիւններին: Միացեալ-Նահանգնե-րում միշտ խօսակցութիւնների, մինչև անգամ չիտիթութիւնների պատճառ է եղել տեղական և եկար չինացի բանտարների մրցումը: Չինացի բան-տարների մրցումից շատ երկուց են կրում տեղական-ները, որոնց թշնամական յարաբերութիւնները շատ վաղուց են սկսուած և մինչև այժմ էլ շարունակ-վում են: Բանտարների երկու թշնամի բանտարների լարված յարաբերութիւնը նորերումս լուրջ գրու-թիւնների նիւթ դարձաւ վաշինգտոնի և Պեկինի կարենետների մէջ: Չինական կառավարութիւնը պաշտպան է հանդիսանում իր հպատակներին, որոնք ճնշուել և արտաքսուել են տեղական բան-տարներից, և նրանց համար վարձատրութիւն է պահանջում: Ներկայացնելով կոնգրէսին այդ հարցին վերաբերեալ մանրամասնութիւնները, Մի-ացեալ-Նահանգների նախագահ Կլիվլենդը, խն-դրեց օրէնստու ժողովը հրաժարուել պատաս-խանատու լինելուց այն վնասների համար, որը կրել են չինացի-բանտարները Միացեալ Նահանգ-ներում մասնաւոր և ոչ ընդհանուր պատճառնե-րից: Հասկանալի է որ այդպիսով խնդիրը միշտ-գային կերպարանք կարող է ստանալ, և եստեղ Չինաստանը խիստ միջոցների կարող է ձեռք առ-նել ընդդէմ Չինաստանում ապրող Միացեալ Նա-հանգների հպատակներին: Հասկանալի է, որ չի-նական կառավարութիւնը չի ուշացնի և կը դի-մի խիստ միջոցների, եթէ վերջնականապէս բա-ւականութիւն չի ստանալ Միացեալ Նահանգ-ներից: Սակայն հետաքրքիր է, թէ արդեօք հա-տարակաց կարծիքը հասնութիւն ցոյց կը տայ Կլիվլենդի մտքին, թէ ոչ: Գծուար: Գուցէ այդ բոլորը ստիպէ դրական Ամերիկային միանգամայն նոր հիմքերի վրա դնելու բանտարների խնդիրը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Հռոմից հեռագրում են ֆրանսիական լրագիր-ներին, թէ այս վերջին օրերս եկած հեղեղանման անձրևների պատճառով խալիսիայի Կալաբրիա գաւառում 250 տնից աւելի փլած են: Խալիսիայի թաղաւորը գնաց այցելելու այդ տեղերը, որտեղ բնակիչները ամեն բանից զրկված միճակի մէջ են գտնվում:

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ օրիորդ Ուրէլ-տին Օկլէր, «La Citoyenne» (Քաղա-քացիուհի) լրագրի անօրէնտէին, մի նամակ է գրել Ֆրանսիայի առևտրական միջնորդ պ. Լօկուրային: Երբ լուրստում է կամային էլ ըն-դունել լինելու համալսարանային հանդէսի կարգա-դրիչ մասնագիտների մէջ:

—Ֆրանսիական դեսպան Ս. Պետերբուրգում նշանակվեցաւ դեմիտրի Բիլիւ:

—Կ. Պոլսի լրագիրները լուր են, որ վանի նոր նշանակված կուսակալ Աքիֆ փաշան մտադիր է հրաժարական տալ իր պաշտօնից, իր ծերութեան պատճառով:

—Ֆրանսիական պատգամաւորների ժողովում, պրինցիներին արտաքսելու խնդրի քննութեան փա-մանակ, ծայրայեղ ձախակողմեան անդամ պ. Մօրէ, ամբին բարձրանալով իր կուսակցիների կողմից ասաց հետեւեալը. «Այժմ, ինչպէս և միշտ, մեր քննութեան առաջարկած օրէնքի վրա մենք նայում ենք, իբրև հաւատարմութեան և ազատու-թեան սկզբունքը խախտող մի միջոցի վրա: Այդ օրէնքը վնասակար է հասարակագիտութեան դա-դարների համար: Մենք նայում ենք այդպիսի բա-ցաւիկ օրէնքներին վրա նոյնպիսի տհաճութեամբ, որպիսի տհաճութեամբ նայում ենք արտաքսութիւն-ների վրա: Մենք պրինցիներ չենք ընդունում, և չենք էլ հասկանում, մենք ընդունում ենք քաղա-քացիներ: Եւ ի՞նչ կան դատարարութիւն պատրաս-տող քաղաքացիներ, այդպիսիներին կարելի է հա-թարկել սովորական դատաւարանին, իսկ եթէ դա-տարարութեամբ չեն պարագում նրանք.—արտաք-սել անկրթացի է... Պատմութիւնը արագուցել է, որ ոչինչ խտտութիւն և հալածանք չեն կարող փրկել թոյլ կառավարութիւններին: Այն ինչ որ երևում է հալածանքի մէջ իբրև եռանդի նշան, է իսկապէս թոյլութեան ապացոյց: Մենք չենք ու-ղղում թոյլ տալ մեր թշնամիներին կարծելու, որ հասարակագիտութիւնը երկիւղներ է կրում: Հա-տարակագիտութիւնը երկուց կրելու պատճառ-ն է: Ազգի պաշտպանութեան և համակրութեան զօրութեամբ հասարակագիտութիւնը պէտք է ա-

տէ, արժամարէն այն միջոցները, որոնց դիմում են թոյլ կառավարութիւնները: Յայտնի է արդէն ընթերցողներին, որ ժողովը 330 ձայնով ընդգէմ 193 մերժեց այդ աքսորելու օրինագիծը և անցաւ հերթական հարցերին, յայտնելով իր հաւատը կրկին անգամ հասարակագիտութեանը:

—Վիեննայից գրում են, որ ռուսաց կառավա-րութիւնը պատուիրեց Զիլեդիայում տասն չոգե-նաւ: Այդ բանը արտառանձանում ուշադրութիւն գրուեց:

—Գերմանական լրակատարը սկսեց գլխու-մնալով ծառուութեան օրինագիծի քննութիւնը: Իշ-խան Բիսմարկի բացակայութեան պատճառով կառավարութեան օրինագիծը պաշտպանում էր ֆինանսների միջնորդ պ. Ծօլլը, որի ձառք մի-ժամ տեղեւ, և միմիայն պահպանողականներից ծափահարութիւն ստացաւ: Մենալով ծառուութեան գործը պաշտպանում էր պահպանողական Վեքել-Մալգոլան միայն, իսկ հակառակ էին խօսում յառաջադիմական Եվլենի Բիլստեր և կենտրոնի-անդամներից մէկը, որոնց ձառքը գրադեցրին ամբողջ նիստը:

—Մալգոլան հաղորդում են, որ հիւսիսային Խա-լիսիայում յեղափոխականների գործունէութիւնը ներկայ կառավարութեան դէմ օրէջցոր դարգանում է, և անդի ունեցան արդէն մի քանի խռնակու-թիւններ: Չինաստանի խորհուրդը այդ խռնա-կութիւնների պատճառ եղողներից մի քանիսին պատժի դատապարտեց:

—Ամէնից հեռագրում են, որ կառավարութեան օրգանները լուրեր են տարածում ազգի մէջ այն մասին, թէ մեծ պետութիւնները չեն խանդարի տաճկա-յունական պատերազմը: Արեւելեան—Ռու-սիայից մասնատակները սկսեցին զայլթել: Պոլսից եկած Ելիս-Իւ-Իսլայմի ներկայացուցիչը աշխատում էր այդ բանի առաջին առնել:

—Կ. Պոլսի լրագիրների խօսքով, Ասիական Տաճ-կաստանի գիւղերում կամաւոր հանդանակութիւն է բացված զորքի և առհասարակ պատերազմական պէտքերը հոգալու համար: Քաղաքներում կազմե-ված են յանձնագողմներ բոլոր ազգութեան և դատարարութեան ներկայացուցիչներից: Խաղաքանչիւր անգամ դործում է, զլխաւորապէս իր ազգային-ների չըմբռնում: Հրաւեր է կարգացվում բոլոր ժողովրդեան մասնակցելու այդ հանգանակու-թեան: Մուշում մինչև այժմ հանգանակած է 10,000 բուլղի, Բաղդադում 15,000 բուլղի և այլն: Հաղորդելով այդ նորութիւնները, մեր կողմից չենք երաշխաւորում դրանց ճշմարիտ լինելուն:

—Ալբանիայում, Բոնիայում և Հերցեգովինա-յում ազգաբնակչութեան մէջ նկատվում է յուզ-մունք: Այս յուզմունքի գլխաւոր պատճառները մէկն էլ կաթոլիկ կղերի կրօնական պրօպագանդան է, որը գրգռում է առանձնապէս մասնատակա-ն ժողովրդին:

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

Մարիէնէն դուռ 1882 թիւն հաստատած օրէնքի հիման վրա, իրանց կնոջը ծնող մարդիկը ենթարկվում են հրապարակական պատժի և ծեծ-վում են: Նորերումս մէկին, որը ծնել էր իր կնոջը, ենթարկեցին այդ օրէնքի պատուէրին, և ծնեցին բազմութեան առաջ, մարտիկով խելելով նրա կիսամերկ մարմինը: —Այսպէս վարվել մի-այն նեղրների հետ կարելի է, ասած ծեծ ուտողը, բարկացած կերպով: —Այս, սիրելիս, ասաց նրան դատարանական պաշտօնեան, եթէ ճշմարիտ է, որ այդպիսի ծեծ նեղրներին է միայն վայել, աւելի ճշմարիտ է այն, որ իր կնոջ ծնող մարդը ոչն-չով աւելի չէ մի նեղրից: *

Միացեալ Նահանգներում թատրոնների թիւը հասնում է 3249-ի: *

1884 թվականին դոմինիցաւ Աֆրիկայում մի աղաւթնաճ 475 կարատ ծանրութեամբ: Աղա-ւթնաճի արդէն արված է վերջնական ձեք, և նա-այժմ ունի 200 կարատ ծանրութիւն, և է ամեն կարմիր առաջինը աշխարհի երկուսի պատմական և արքայական աղաւթնաճների մէջ: *

Փարիզի դիտարանը նորերումս հնարեց մի դոր-ծիք, որի միջոցով կարելի է ստանալ երկնային մարմինների ճշտ պատկերը: Այդպիսով աստ-ղագիտը ունենալով իր դրամաներակում երկնային մարմինների լուսանկար կարող է հեշտութեամբ ենթարկել նրանց խոշորացուցական հարկաւոր քննութիւններին:

»ՄՇԱԿԻ« ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՆԵՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 մարտի: Ռուսաստանի և Կո-րէայի մէջ կայացած առևտրական պայմանագրու-թիւնը հրատարակված է: Հրատարակված է Պե-տական խորհրդի կարգադրութիւնը՝ կառավար-ւել Ամուրեան և Սամարեան վերահսկող պալատը, իսկ Լինիսի պալատը վերացնել: Նախկին ար-դիւնաբերութեան «Նօրէլ» ընկերութիւնը դիմեց խնդրագրով ֆինանսական միջնորդութեանը, որ-պէս զի միջնորդութիւնը պարզեցնելով մի առանձ-նաշարժութիւն՝ թոյլատրել նրան հրատարակել 21/2 միլիոն ռուբլու օրվապահանք: Չը հաստատված պարտքի կոնսոլիդացիայի համար, օրվապահանքի գնելու ցանկութիւն յայտնուրեւ արդէն կան:

ՄԵԼՁՐՍՏՐԻ, 7 մարտի: Այսօր բանտարները, անդործ մնացած լինելու պատճառով, անկարգու-թիւններ արեցին: Ոստիկանութիւնը չը թոյլ տուեց նրանց յափշտակութիւններ անելու և ձեռ-բակալեց նրանցին երեքին:

ԼԻԷԺ, 7 մարտի: Այսօր տեղի ունեցան այստեղ ծանր անկարգութիւններ փարիզի կամուրայի ատարմութեան տարեգարծի պատճառով, 100 հոգի անկարգութիւն անողներից ձերբակալված են:

Կ. ՊՈԼԻՍ, 7 մարտի: Օրէնսդից եկող «Ռուս նաւագնացութեան ընկերութեան» «Ալեքսանդր» կոչված չոգեհաւը երէկ Կլիւի մօտ նաւակոծու-թեան ենթարկվեց, բոլոր ճանապարհորդները և նաւաստիները ազատված են, չոգեհաւի դրոժիւնը վտանգաւոր է, որովհետեւ այնկոծութիւնը դեռ շարունակվում է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի: «Новое Время» հա-ղորդում է, որ սրբ. Սիմօնի ատենի դերկետոր Սաբլերը կուղերովի այս ամառս դէպի Կ. Պոլսի բա-ցատրելու համար յոյն-բուլղարական հարցը, Կ. Պոլսի պատրիարքի Հռոմի պապին մօտենալու գործ գրած ջանքերի պատճառով: Սաբլերը կը գրազլի նմանապէս Կ. Պոլսում ռուսաց ուսումնարան հիմնելու խնդրով և կայացել Աֆոնը:

ԼՕՆԻՐՆ, 8 մարտի: Շուկապետական քարտու-ղարը հաղորդեց համայնքների ժողովին, որ պատ-րաստվում են 20 զբահակիր և 34 ակամակիր նաւեր:

ՓԱՐԻԶ, 8 մարտի: Փարիզի կամուրայի ատու-տարմութեան տարեգարծի օրը այստեղ խաղաղ անցաւ:

ԼԻԷԺ, 8 մարտի: Կէս դիւրին միայն աջողվեց խաղաղութիւն վերականգնել, արմկարաններից և զինուորներից շատերը վերաւարված են: Ամբիսի տուած վնասները հաշուած են մի քանի հարիւր հազար ֆրանկի:

ԲԵՐԼԻՆ, 8 մարտի: Եւրոպի վրա դրած հար-կերի օրինագիծը գլխաւոր կետերը երկրորդ ըն-թերցման միջոցին լրակատարը մերժեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մարտի: Ամսիս 7-ից սկսվեց ճանապարհորդների երթեկութիւնը Վիլնոսի և Վարշավայի մէջ, իսկ Բրեստի և Բելոստոկի մէջ երթեկութիւնը դադարեցրած է ձիւնակոյտների պատճառով:

ԱԹԷՆԵՐ, 8 մարտի: Պատերազմական արամադ-րութիւնը ստատկանում է, մեծ քանակութեամբ զէնքեր են ուղարկվում դէպի սահմանները, Թէ-սալիայում կառուցվում են ամրութիւններ:

ՍՕՖԻԱ, 8 մարտի: Այսօր միջնաւորների խոր-հրդի ժողով կը լինի թիւրք-բուլղարական համա-ձայնութիւնը քննելու: Զօրադաշտը շարունակ-վում է արագ կերպով:

ԽԱՐԿՈՎ, 9 մարտի: Այստեղ կառուցվում է պետական կառուածների միջնորդութեան ձեռքով բակտերիոլոգիական կայարան, սիբիրական ակադ-և եղջիւրաւոր կենդանիների փանտալարը հետա-դոտելու համար: Խաղիւթի կալածական բանկը սկսեց հատուցանել հողերի գրաւակաւում վոխատ-ւութիւնները 61/4/0 և միջնորդութիւն է թոյլ տալ իրան հատուցանել 6/0-ով: հաշուելու և պարտքի հանգցնելը:

ՍՕՖԻԱ, 10 մարտի: Իշխանը չէ համաձայն-վում ստորագրել թիւրք-բուլղարական փոփոխված համաձայնութիւնը և անդում է այն կէտի վրա որ իրան նշանակին Արեւելեան-Ռուսիայի նա-հանգապետի պաշտօնում անորոշ ժամանակով:

ԲԻՐԻՍԷԼ, 10 մարտի: Գէմապագում անկարգութիւններ եղան, որի պատճառով բանտարկների և ժամգարմէրի մէջ բաւական ծանր ընդհարումն եղաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Մարտի 7-ին

Ռուսաց 1 բուրլ Լճնդոնի վրա արժէ	24 1/4	պէնս
— — — — —	205 5/8	պէն.
— — — — —	253 1/2	սան.
Ոսկի — — — — —	8 ր. 17 Կ.	
Մաքսային կուսկոններ —	8	> 17
Արծաթ — — — — —	1	> 25
Բորսային դիսկոնտներ —	4 1/2	և 6 0/0
Պետական. բանկ. 5 0/0 տոմս 1-ին շրջանի	100	> 25 Կ.
— — — — —	2-րդ	— 100 > 25
— — — — —	3-րդ	— 100 > 25
— — — — —	4-րդ	— 100 > 25
— — — — —	5-րդ	— 100 > 25
Արեւելեան 5 0/0 փոխառութ. 1-ին շրջ.	100	> 50
— — — — —	2-րդ	— 100 > 37
— — — — —	3-րդ	— 101 > —
Ներքին 5 0/0 առաջին փոխառութ.	239	> 50
— — — — —	երկրորդ	— 224 > 50
5 1/2 0/0 Բէնտա	104	> 50
Ոսկեայ Բէնտա	180	> —
Նոր կոնսոլիդաց փոխառութիւն. . .	153	> 75
5 0/0 գրաւական թղթեր կալուած.		
— փոխ. կրեդ. ընկ.	153	> 50
5 1/2 0/0 գրաւական թղթեր խերսոնի		

կալուած. բանկի.	96	> 72
6 0/0 գրաւակ. թղ. խարկովի կալ. բան.	100	> 75
— — — — —	100	> 87
— — — — —	101	> —
— — — — —	101	> —
— — — — —	102	> 50
— — — — —	100	> 50
— — — — —	101	> —
— — — — —	100	> —
— — — — —	27 և 43 տ. 97	> 25
— — — — —	18 և 43 տ. 96	> 75
Վ. օլժակո-կամսի բանկի ակցիաները	519	> —
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	254	> —
Բիւրոսկ-Վ. օլժակո ընկ.	84	> 25
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլի-		
գացիաներ.	91	> 50
Մոսկովայի քաղաք. օբլիգացիաներ .	92	> 25
Օղէսայի — — — — —	94	> —
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը		
ամուր է:		

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ. Վասիլ Գեղամեան. Ստացանք ձեր պատասխանը պ. Յ. Ղորղանեանին: Կը տղեկը: Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
(N. PAQUET ET COM.)

Զորքը թիւ 19-ին, „ԱՐՄԵՆԻԱ“ (ARMENIE) շողնաւը, նաւապետն է ԺԻԲՈԻՆ (GIBOIN), ղուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է զիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արժուոնու գալ-լերէում, Ձճ 103.

ԹԻՖԼԻՍՈՒՄ. Երևանեան հրատարակի վրա, ԽԱՐԱԶՈՎԻ տանը, բացված է ԿԻՆԵՎԻ ԴԻՏԻԱՏԿՈՎՍԿԻ ընկերութեան թղթի գործարանի մեծ ՊԱՋԵՍԻ: ՊԱՋԵՍԻ մէջ կարելի է ստանալ ամենալաւ տեսակ թէ ԳԻՆԵՎԻ, թէ ԼԻՍԱԳՐԱԿԱՆ և թէ ՏՊԱԳՐԱԿԱՆ թղթի, նոյնպէս ՊԱՊԻՐՈՍԻ, ԹԵՅԻ և ՓԱԹԱԹԵՂԻ թղթի ամենալաւ տեսակները գործարանական գներով: Դիտարկողների փաբրիկայի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ընկերութեան ագէնտ Վ. Վ. ԲԱՐԱԿԱՆՕՎ:

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՒ ԿՕՄԻՍԻՍԻՍՈՎ կատարել գործեր ՓՅՈՒՈՒՄ, Խնչպէս, օրինակ, կըշ-ռել, յանձնել, նաև ծախել և հաշիւները գրել հաշահատիկները: ՅՈՐԵՆԻ, ԳԱՐԻԻ, ԿՏԱԻԱՆՏԻ և ՍԻՄԻՆԻՐԻ և այլն: Ուրիշ քաղաքներէ կարող են ինչ զիմել հետեւեալ հասցէով. ПОТІ, Сирахану Теръ-Мартиросянцъ.

Ս. Տէր-Մարտիրոսեանց

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ

Յանձն է առնում թարգմանել ֆրանսերէ-նից, գերմաներէնից և անգլերէնից մատչելի գնեթով: Հարցնել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը: 4—100

ՀՕԿՕԼԵՐ

Ս. ՍԻՈՒ Ը ԸՆԿ.
(II. 4857.) 3—50 (Կ)

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏՆՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՁԵՂԻ ՁԵՆՆԱՐԿ առևտրական հաշուարարու-թիւնները առանց ուսուցչի օգնութեանը ուսուցմանիւ համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Վաճառվում է Կենտ, Կրպաճառանոցում, եղբարց Ծովանօյնների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Лабораторная, № 11: Օտարա-քաղաքացիք զիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է ամեն տեղ 2 րուբլի:

8—30

Ստացել եմ ֆրանսիական նշանաւոր գործարանից, զիմանական Պատեթորի սխառ-մով պատրաստված, ցէկլուէր շերամի սերմ: Ծախում եմ իւրաքանչիւր զօյտանիկ մէկ րուբլիով: Մի և նոյն տեղում վաճառվում է բոլորովին նոր Նաշէի, (Nachet) սխառմի, 500 անգամ մեծացնող խոշորացոյց իր բոլոր պարագաներով: Յանկացոյնները թող զի-մեն—Լերիսէ, Թիֆլիս, Նադորնայա փողոց, № 11 Փրիզոնովի տուն Սոլալիւրում:

3—3

ԹՈՑԻՏԻՈՒԹԵԱՄԲ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՅՐԱԲԱՂԱԲԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Էլէկտր-Меланге. Մաղերի արագ և առատ բուսաց-նելու համար և նրանց պահպանե-լու թափվելուց: Գի-նը 2 ր. սրուակի համար, գործածու-թեան հրահանգի հետ միասին, ուս-սերէն, ֆրանսերէն և գերմաներէն լե-զուով:



Բաղաւմ—Eu-ge'nie. զափնեա և պակի փոշոյի ծաղիկներից, և րետին, չիկնքին և ձուրերին քնք-չուլիւն և փափ-կովիւն, նոյն-պէս և մարմարի-ոնի սպիտակու-թիւն տալու հա-մար, չուշանի և վարդի անուշա-

հոտովեամբ, նոյնպէս կաշու անհարթութիւնը և բիծերը ոչնչացնելու: Գինը 1 ր. 75 Կ. սրուա-կի համար, գործածութեան հրահանգով ուսուցին, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով: Կարմիրաղեղ—Eugénie. հեղուկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու, որ չէ փոխվում էլէկտրական լուսաւորութեան ժամանակ և որ չէ սրվում երեսի քրտիքից: Առաջարկ-վում է մանաւանդ թատրոնների և պարահանդէսների համար: Գինը 1 ր. 50 Կ. սրուակի համար, գործա-ծութեան հրահանգով ուսուցին, ֆրանսերէն և գերմաներէն լեզուով:

Այդ բոլոր երեք կոմպոնիւսիւս արդիւնները բժշկական վարչութեան վկայութեամբ, չեն պա-րունավում իրանց մէջ որ և է վնասակար նիւթեր:

Բէրլին Ռիս.

ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՅԱԾ ՊՕՄԱԳ

Խակկան «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատա-հող ուրիշ անախորժ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երկտարադակաւ թարմութիւն և գեղեցկութիւն: Գինը մի սրուակի համար 1 ր. 60 Կ.

Գինի-դիլէրներեան արժաւոր պերուական բաղաւմից, մաղերը սնդոցնելու, խտացնելու և մե-ծացնելու համար: Գ. 2 ր. սրուակի համար:

Ձուրերի պոմադ: Գինը սրուակի համար 1 ր. 30 Կ.: Խաբարանչիւր սրուակի վրա գտնվում է պաշտպանողական գործի, մի «հրեշտակ» և հնարող ստորագրութիւն «Bertha Ries».

Խակկան «Poudre-Eugénie» սպիտակ և վարդադոյն փոշի. Գ. արկղիկի վրձնում 1 ր. 50 Կ. առանց վրձնի 1 ր. 20 Կ.

Մաղերի ներկը երեք գոյնի. սև, շաղանակադոյն և բաց-չէկ. Գ. արկղիկի 3 ր. ներկը Ռիս-Գուտմանի գործարանի:

Դիտարկ պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում Վ. Գրիվն ա կ է գեղատան ապրանքների մագաղի-նում, Վճնդոն: Հարանցիկ տակ, Զուրաւովի տանը:

15—100.

Մ Ա Ր Տ

Տ Ե Ղ Ե Կ Ա Յ Ո Յ Ց

1886 թ.

ԱՆԴՐԱԿՈՎԱԿԱՆԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ	ՇՈԳՆԱԿԵՐ «Ռուսաց ընկ. նաւապետութեան և առևտրի»	ՓՕՍԱՑԻՆ ԿԱՌՔԵՐ	ԹԻՖԼԻՍԻ ՊԵՏՈՑՔՆԵՐԻ ՏԱԿԱԱ
ԹԻՖԼԻՍԻՑ Բաթում փոստային	ՀԻՆԳՇԱԲԹԻ 4 ժամին կէս օրից յետոյ շողե-նաւը գնում է ուղղակի Բէյրութ ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ՕԳԵՍՍԱ:	ԹԻՖԼԻՍԻՑ Վաղդիկովիս փոստ. կտուրը գնում է առաւօտեան 8 ժամին և համարում է Վաղդի-կովիս 6-ին կամ 7 ժամին:	Թիսած հացը կրուտաւակ ալիւրից ֆուն. 5 կոպ. 3 արենի ալիւրից 1 տեսակի — 2 1/2 >
Գնացքը գնում է առաւօտ.	ԶԱԲԱԹ 8 ժամ. երեկոյ. շրջական Բէյրութ ԲԱ-ԹՈՒՄԻՑ դէպի ՕԳԵՍՍԱ:	ՎԱՂԴԻԿՈՎԱԿԱՆԱՆ գնում է գնում առաւօտ-եան 9 ժամին և համարում Թիֆլիս 5 կամ 5 1/2 ժամին:	Թծերի մէջ թիսած հացի ֆուն. 1 տեսակ 4 1/2 >
ԲԱԹՈՒՄԻՑ Թիֆլիս գալիս է ևրեկ. 10 > 25 >	ԿԻՐԱԿԻ երեկոյեան արտասահմանեան Բէյրութ ԲԱԹՈՒՄԻՑ դէպի Կ. ՊՕԼԻՍ:	Կառքերը, որոնք ճանապարհին չեն գիշերում, Թիֆլիսից դէպի Վաղդիկովիս գնում են 4 ժա-մին կէս օրից յետոյ, նոյնպէս և Վաղդիկովիսից դէպի Թիֆլիս:	2 — — 2 >
ԹԻՖԼԻՍԻՑ Բաթում գում է երեկոյ. 10 > 55 >			Թծերի մէջ թիսած հացի ֆուն. 1 տեսակ 4 1/2 >
ԲԱԹՈՒՄԻՑ Թիֆլիս գալիս է առ. 8 > — >			2 — — 3 >
			3 — — 2 1/2 >
			Կրուակ. և ցորենից լաւաշներ 1 տեսակի 4 1/2 >
			2 — — 3 1/2 >
			3 — — 3 >
			Տաւարի մսի ֆունտը 1 տեսակի 8 >
			2 — — 7 >
			Սուկի — — 14 >
			Ոչխարի մսի ֆունտը. 9 >
			Խոզի մսի ֆունտը. — >